ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐՄԻՆԵ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարը, Կենտկոմի հունվարյան և հունիսյան (1987 թ.) պլենումները լուրջ ուշադրություն նվիրեցին երկրի տնտեսական զարգացման արդի փուլում և երկարատև հեռանկարում տնտեսական ստրատեգիայի մշակման, էկոնոմիկայի և, ընդհանրապես, հասարակական կյանքի բոլոր ասպարեզների վերակառուցման, մարդկային գործոնի դերի բարձրացման հարցերին։ Կուսակցությունը միշտ էլ տնտեսական ստրատեգիայի բարձրագույն նպատակը համարել է և այսուհետև համարում է ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ վերելքը։ Այդ նպատակին հասնելու միջոցը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումն է, որ կապահովվի գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա հասարակական արտադրությունն ըստ ամենայնի ինտենսիվացնելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու շնորհիվ։

Տնտեսական զարգացման արդի փուլում առավել մեծ նշանակություն են ստանում ժողովրդական տնտեսության պլանավորման ճկունության բարձրացման, նրա անընդհատ կատարելագործման հարցերը։ Մասնավորապես դա վերաբերում է համապետական մակարդակի խնդիրների հետ ռեգիոնալ բնույթ կրող հարցերի ճիշտ զուգակցմանը, օբյեկտիվ տնտեսական օրենքների պահանջները գիտականորեն հաշվի առնելու հիման վրա պլանավորման կատարելագործմանը և ժողովրդատնտեսական կատարյալ համամասնությունների ապահովմանը։

Ժողովրդատնտեսական պլանավորման ընթացքում համապետական մակարդակով առաջադրված խնդիրների հետ ռեգիոնալ խնդիրների ճիշտ զուգակցումը ոչ միայն օբյեկտիվորեն նպաստում է ամեն մի տնտեսական շրջանի ռեսուրսային պոտենցիալի առավել ռացիոնալ օգտագործմանը, այլև նպատակասլաց ձևով կանխորոշում կոնկրետ ժամանակաշրջանում դրանց առջև ծառացած տնտեսական ու սոցիալական համապարփակ խնդիրները, տեսանելի դարձնում արտադրողական ուժերի զարգացման տարբեր մակարդակներով բնութագրվող տնտեսական շրջանների համահարթեցման, մերձեցման ուղիները։ Ավելի լայն առումով՝ նման պլանավորման մշտական կատարելագործումը հանգեցնում է հասարակական աշխատանքի արտադրողականության, հանրային արտադրության արդյունավետության հետագա բարձրացմանը։ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններով նախատեսված է մինչև 2000 թ. ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 2,3—2,5 անգամ։ Դրա շնորհիվ սովետական էկոնոմիկան դուրս կգա զարգացման որակապես նոր ուղի։ Արտադրության աճը առաջին անգամ կապահովվի նյութական արտադրության ճյուղերում նոր լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ չընդգրկելով։ Ավելին, առանձին ճյուղերում (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն և այլն) հարկ կլինի հասարակական արտադրության աճը զուգակցել աշխատանքային ռեսուրսների առկա մասշտաբները կրճատելու հետ։ Դրանով իսկ է՛լ ավելի մեծ հնարավորություններ կստեղծվեն սոցիալական շատ հարցերի լուծման համար։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության բոլոր պոտենցիալ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ընդհանուր համակարգում հատուկ կարևորություն

են ստանում նաև աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման կոնկրետ ուղիների բացահայտման հարցերը։

Հայտնի է, որ աշխատանքային ռեսուրսների աճը 12-րդ հնգամյակի տարիներին կկրճատվի և կկազմի ընդամենը 3,2 մլն մարդ, որը գրեթե լիովին կտրամադրվի կրթությանը, առողջապահությանը, սոցիալ-կուլտուրական մյուս ճյուղերին, մինչդեռ անցած հնգամյակում աշխատանքային ռեսուրսների աճը մոտավորապես հավասար բաժանվեց արտադրական և ոչ արտադրական ոլորտների միջև[1]։

Դրա հետ մեկտեղ վերջին երկու տասնամյակների ընթացքում երկրի տարբեր տնտեսական շրջաններում և միութենական հանրապետություններում դրսևորվող ժողովրդագրական զարգացման առանձնահատկություններն իրենց խոր հետքն են թողել ամեն մի տնտեսական շրջանի աշխատանքային ռեսուրսների կազմավորման, դրանց բաշխման և օգտագործման ընթացքի վրա։ Այդ պատճառով էլ, եթե ամբողջ երկրի մասշտաբով նկատվում է աշխատանքային ռեսուրսների համալրման աճի տեմպերի նվազում, ապա առանձին տնտեսական շրջաններ բնութագրվում են աշխատանքային ռեսուրսների համալրման մեծ ռեզերվներով։ Դա նշանակում է, որ որոշ տնտեսական շրջաններ բնութագրվում են աշխատանքային ռեսուրսների պասիվ, իսկ մյուսները՝ ակտիվ հաշվեկշռով։ Կան տնտեսական շրջաններ, որոնք միջին դիրք են գրավում, որ գերազանցապես կապված է ժողովրդագրական մեկ իրավիճակից մի այլ իրավիճակի անցումային փուլի հետ։

Աշխատանքային ռեսուրսների չափազանց լարված հաշվեկշռով են բնութագրվում ՍՍՀՄ եվրոպական մասի գրեթե բոլոր հանրապետությունները, Սիբիրը, Հեռավոր արևելքը։ Ակտիվ հաշվեկշիռ ունեն միջինասիական հանրապետությունները, Ադրբեջանական, մասամբ նաև Հայկական ու Ղազախական ՍՍՀ-ները։ Վրացական ու մոլդավական հանրապետությունները թեև չեն բնութագրվում ի հաշիվ աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության մեծ չափերով, բայց և այնպես չունեն նաև աշխատանքային ռեսուրսների դեֆիցիտ։

Աշխատանքային ռեսուրսների լարված հաշվեկշռով բնութագրվող հանրապետությունները բնակչության բնական վերարտադրության ցածր տեմպերի հետ մեկտեղ ունեն հանրային տնտեսությունում զբաղվածության բավականին բարձր մակարդակ և զուրկ են այն աշխատանքի չհանրայնացված ոլորտի հաշվին համալրելու հնարավորություններից։ Մինչդեռ մյուս հանրապետություններն ունեն բնակչության վերարտադրության բավականին արագ տեմպ և չհանրայնացված աշխատանքի ոլորտում զբաղված բնակչության մեծ ռեսուրսներ։ Ինչպես առանձին հանրապետություններ, այնպես էլ դրանց ներսում ամեն մի տնտեսական շրջան, բնութագրվում են աշխատանքային ռեսուրսների համալրման իրենց հատուկ գործոններով։ Դա թելադրվում է ոչ միայն տվյալ ռեգիոնի պատմականորեն առաջացած և ներկայումս դրսևորվող դեմոգրաֆիկ առանձնահատկություններով (ծննդաբերության մակարդակ, կյանքի միջին տևողություն, բնակչության կազմում երեխաների տեսակարար կշիռ, ընտանիքի միջին մեծություն, կրոնական պատկանելություն, հանրային արտադրության մեջ կանանց ընդգրկելու սովորույթ, կրթական ընդհանուր մակարդակ և այլն), այլև արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, աշխատանքի բնույթով, բնակչության սպասարկման աստիճանով և այլն։ Համանման երևույթ բնորոշ է առանձին խոշոր ռեգիոնների, հանրապետությունների ներսում՝ նույնիսկ առանձին տնտեսական շրջանների։ Այսպես, օրինակ, աշխատանքային ռեսուրսներով ապահովված այնպիսի հանրապետություն, ինչպիսին Հայկական ՍՍՀ-ն է, ռեգիոնալ առումով բնութագրվում է տարբեր ցուցանիշներով։ Որոշ տնտեսական շրջաններում աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության մակարդակն անհամեմատ բարձր է, շատ է աշխատանքային տարիք մուտք գործող բնակչությունը, խիստ բարձր՝ անձնական օժանդակ

[1] «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 326—327։

և տնային տնտեսություններում զբաղված բնակչության տեսակարար կշիռը։ Վերջիններիս զգալի մասը չունեն պրոֆեսիա և որակավորում։ Մինչդեռ հանրապետության մի շարք շրջաններ, աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության շատ համեստ ցուցանիշի հետ մեկտեղ, չունեն հանրային տնտեսությունը չհանրայնացված ոլորտի հաշվին համալրելու իրական ռեզերվներ։ Շատ դեպքերում աշխատանքային ռեսուրսներով ապահովված առանձին շրջաններում անձնական օժանդակ և տնային տնտեսություններում ընդգրկվածության բավականին բարձր մակարդակի պայմաններում որոշ արտադրություններ չեն կարողանում համալրել իրենց աշխատուժի պակասը՝ համապատասխան պրոֆեսիոնալ-որակական կազմի բնակչության բացակայության պատճառով։

Ինչ վերաբերում է երկրի առանձին հանրապետություններին, այդ մասին պարզ պատկերացում տալիս են 1979 թ. մարդահամարի նյութերը, որոնք, անշուշտ, այսօրվա պատկերը արտահայտում են մոտավոր չափերով։ Ըստ այդ տվյալների՝ ՍՍՀՄ-ում հանրային տնտեսության մեջ է ընդգրկված ընդհանուր բնակչության 51,5 %-ը, այդ թվում տղամարդկանց՝ 55,7, կանանց՝ 47,8 %-ը[2]։ Բնակչության մնացած մասը հանրային տնտեսության մեջ չընդգրկված թոշակառուներն են, մինչև 16 տարեկան անչափահասները, տնային տնտեսություններում ընդգրկված աշխատանքային տարիքի բնակչությունը, ինչպես նաև հաշմանդամները՝ անկախ աշխատանքային տարիքից։

Եթե խմբավորենք հանրային տնտեսության մեջ բնակչության զբաղվածությունը, ապա այն ըստ հանրապետությունների կարելի է ներկայացնել հետևյալ հինգ խմբերով։

Աղյուսակ № 1

ՍՍՀՄ բնակչության զբաղվածությունը հանրային տնտեսության մեջ ըստ միութենական հանրապետությունների (միութենական հանրապետությունների զբաղվածության մակարդակի շեղումը միջին ցուցանիշի նկատմամբ, 1979 թ. մարդահամարի նյութերով)[3]

Հանրապետությունների խմբավորումը	Հանրային տնտեսության մեջ զբաղվածության շեղումները ՍՍՀՄ միջին ցուցանիշի նկատմամբ	Այդ թվում՝	
		տղամարդիկ	կանայք
1	2	3	4
I խումբ			
Լատվիական ՍՍՀ	+3,3	+3,2	+3,5
Էստոնական ՍՍՀ	+3,0	+3.0	+3,1
ՌՍՖՍՀ	+2,5	+4,3	+1
II խումբ			
Բելոռուսական ՍՍՀ	+0,7	+0,6	+0,9
Ուկրաինական ՍՍՀ	+0.6	+0,9	+0,5
Մոլդավական ՍՍՀ	+0,6	—0,8	1,9
Լիտվական ՍՍՀ	+0,1	—0,6	0,6
III խումբ			
Վրացական ՍՍՀ	—1,1	—1,8	—1,4

[2] «Численность и состав населения СССР, по данным Всесоюзной переписи населения 1979 г.», М., 1984, с. 151—154.

[3] Աղյուսակը կազմված է «Численность и состав населения СССР...» ժողովածուի 151—154 էջերի տվյալներով։

1	2	3	4
IV խումբ			
Հայկական ՍՍՀ	—4,1	—5,5	—3,0
Ղազախական ՍՍՀ	—4,6	—5,0	—4,1
V խումբ			
Ադրբեջանական ՍՍՀ	—7,8	—9,2	—6,7
Կիրգիզական ՍՍՀ	—9,1	—10,2	—9,3
Թուրքմենական ՍՍՀ	—10,3	—11,6	—9,4
Ուզբեկական ՍՍՀ	—11,2	—13,5	—9,4
Տաջիկական ՍՍՀ	—12,3	—14,2	—10,8

Նման խմբավորումը հնարավորություն է ընձեռում բացահայտել ոչ միայն ամեն մի տնտեսական շրջանի աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության աստիճանը, հեռանկարում հանրային տնտեսությունը աշխատանքային ռեսուրսներով համալրելու հնարավորությունը, ռեզերվների առկայությունը, այլև մշակել միջոցառումներ՝ բնակչության լրիվ զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումները կենսագործելու համար։ Դա առաջին հերթին վերաբերում է տնտեսական շրջանների առկա աշխատանքային ռեսուրսների և նոր ստեղծվող աշխատատեղերի միջև հաշվեկշռվածություն ապահովելուն, երկրի հանքահումքային ռեսուրսներն ակտիվ շրջանառության մեջ ներգրավելու նպատակով միգրացիոն տեղաշարժերը պլանային հիմունքներով կարգավորելուն, գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ երկրի և առանձին տնտեսական շրջանների մասշտաբով ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև և դրանց ներսում աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ վերաբաշխման, ազատվող աշխատուժն արտադրության այլ օղակներում ընդգրկելու, աշխատուժի չօգտագործված հնարավորություններն օգտագործելու, պատանիների ու աղջիկների մասնագիտական կողմնորոշման, դրանց, ինչպես նաև տնային և անձնական օժանդակ տնտեսությունից հանրային տնտեսություն ներգրավվող բնակչության պրոֆեսիոնալ որակավորման խնդիրների լուծման և տարաբնույթ այլ հարցերի։

Ինչպես նկատում ենք վերը բերված աղյուսակից, խմբավորման հիմքում ընկած է ընդհանուրից կատարվող շեղումների չափը։ Օրինակ, առաջին խումբը կազմում են այն հանրապետությունները, որոնց շեղումը մեկից բարձր է։ Երկրորդ խմբի մեջ մտնող հանրապետություններում հանրային տնտեսության մեջ են զբաղված ՍՍՀՄ միջին ցուցանիշից մինչև 1 միավորով բարձր զբաղվածություն ունեցողները։ Երրորդ խմբով սկսվում են ընդհանուրից դեպի ցածր շեղում ունեցող հանրապետությունները, որոնք միմյանցից տարբերվում են մեծ տատանումներով։ Այդ խմբի մեջ մտնում է միայն Վրացական ՍՍՀ-ն, ուր հանրային տնտեսության մեջ զբաղվածության մակարդակը Միության միջինից ցածր է մեկ միավորով։ Չորրորդ խումբը ներկայացնող հանրապետություններում շեղումը դեպի ցածր կազմում է 4-ից 4,5 միավոր, իսկ վերջին՝ հինգերորդ, խմբում ընդհանուր միութենականի նկատմամբ բացասական շեղումը կազմում է 8-ից մինչև 12 միավոր։

Սակայն ամեն մի խումբ, տվյալ դեպքում, մյուսներից տարբերվում է ոչ միայն զբաղվածության մակարդակով, այլև բնակչության վերարտադրության տեմպերով, տարիքային կազմով, միգրացիայի բնույթով, գյուղական և քաղաքային բնակչության հարաբերակցության աստիճանով, զբաղմունքով և էկոնոմիկայի զարգացման ուղղվածությամբ, արդյունաբերական զարգացման աստիճանով, աշխատողների պրոֆեսիոնալ կազմով ու որակական մակարդակներով և այլ պարամետրերով։ Դրանք էլ իրենց հերթին, այլ գործոնների հետ մեկտեղ, որոշակի պայման են դառնում հանրային տնտեսության մեջ ընդգրկվելու համար։

Առաջին երկու խմբի մեջ մտնող հանրապետություններում գրեթե լրիվ սպառվել են հանրային տնտեսությունը աշխատանքային ռեսուրսներով համալրելու ռեզերվները։ Մասամբ այդ պատճառով դրանք դարձել են աշխատանքային ռեսուրսների բարենպաստ հաշվեկշիռ ունեցող հանրապետություններից աշխատանքային ռեսուրսներ ընդունողներ։

Առաջին խմբի մեջ մտնող հանրապետությունները բնութագրվում են թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց բարձր զբաղվածությամբ։ Ըստ որում, երկրում տղամարդկանց զբաղվածության ամենաբարձր ցուցանիշով առանձնանում է ՌՍՖՍՀ-ն, կանանց զբաղվածությամբ՝ Լատվիական ՍՍՀ-ն։ ՌՍՖՍՀ-ում, օրինակ, հանրային տնտեսությունում է զբաղված տղամարդ բնակչության 59, Լատվիայում կանանց՝ 51, 3 %-ը[4]։ Լատվիայում կանանց զբաղվածությունը հավասարվում է Միության բնակչության ընդհանուր զբաղվածության միջին մակարդակին։

Առաջին երկու խմբերի շարքը դասվող հանրապետություններն ունեն բնական խիստ դանդաղ աճ։ Դա բացատրվում է ոչ միայն ցածր ծննդով, այլև բարձր մահացությամբ։ Վերջինս պայմանավորված է բնակչության կազմում տարիքավոր մարդկանց մեծ տոկոսով։ Դա իր հերթին հանգեցնում է բնակչության տարիքային կազմում մինչև 16 տարեկանների տեսակարար կշռի անընդհատ նվազմանը և աշխատանքային ու թոշակառու տարիքի բնակչության տեսակարար կշռի ավելանալուն։ Աշխատանքային տարիքի բնակչության մեջ բավականին մեծ թիվ են կազմում համեմատաբար տարիքավորները։ Ծննդաբերության ցածր մակարդակը հանգեցնում է նաև ընտանիքի փոքրանալուն։

Բնակչության կրթական և որակավորման, քաղաքներում կենտրոնացվածության համեմատաբար բարձր տվյալները, ցածր ծնունդը և ընտանիքի փոքր չափերը պայման են դառնում հանրային տնտեսության մեջ, այդ թվում արդյունաբերական բույթի զբաղմունքներում, մասնավորապես մշակող արդյունաբերության ճյուղերում, բնակչության ընդգրկման համար։ Այս բոլորն իրենց հերթին պայմանավորում են բնակչության ինտենսիվ միգրացիան։ Խոսքը տրվյալ դեպքում վերաբերում է ոչ միայն տարածական (գյուղից քաղաք, փոքր քաղաքներից դեպի մեծ քաղաքներ, քաղաքներից քաղաքներ ընդհանրապես), այլև ճյուղային, սոցիալական, պրոֆեսիոնալ միգրացիային։

Վրացական ՍՍՀ-ով սկսվում է միութենական միջին ցուցանիշի նկատմամբ հանրային տնտեսության մեջ ավելի ցածր զբաղվածություն ունեցող հանրապետությունների շարքը։ Բայց ընդհանուրից այդ տարբերությունը Վրացական ՍՍՀ-ում շատ ավելի աննկատ է, քան նրան հաջորդող խմբերի հետ ունեցած տարբերությունն է։ Ուստի Վրաստանը դասվել է մեկ առանձին խմբում։ Բնակչության աճի օրինաչափություններով Վրաստանը հարում է իրեն նախորդող հանրապետություններին։ Այդ պատճառով էլ այստեղ բնակչության զբաղվածությունը համեմատաբար բարձր է։

Հանրային տնտեսությունում զբաղվածության մակարդակով Վրացական ՍՍՀ-ի միջին տեղում գտնվելը բացատրվում է նախ, բնակչության բնական մեղմ աճով, ցածր ծննդով, որի հետևանքով մինչև 16 տարեկան երեխաները քիչ են։ Բնակչության կազմում մինչև 16 տարեկանների հարաբերական տոկոսը հանրային տնտեսությունում զբաղվածության մակարդակն ինչ-որ չափով «թվացող» է դարձնում։ Օրինակ, առաջին երեք խմբերում ընդգրկված հանրապետություններում այդ պատճառով հանրային տնտեսությունում ընդգրկվածությունը բարձր, իսկ մյուսներում՝ ցածր է «երևում»։ Դրա հետ մեկտեղ Վրաստանն ընդհանրություն ունի նաև իրեն հաջորդող խմբերի մեջ ընդգրկված հանրապետությունների հետ։ Օրինակ, դա վերաբերում է անձնական օժանդակ տնտեսությունում զբաղվածությանը, քաղաքային բնակչության տե-

---

[4] Նույն տեղում, էջ 151, 153։

ակարար կշռին։ Վրաստանի քաղաքներում են բնակվում բնակչության ընդհանուր թվի 54,1 %-ը, Ղազախստանում՝ 57,5 և Ադրբեջանում՝ 53,9 %-ը[5]։ Այդ առումով Վրաստանը, իր հերթին, դասվում է աշխատանքային ռեսուրսների ռեզերվներ ունեցող հանրապետությունների շարքին։

Քննվող հարցի տեսանկյունով չորրորդ խմբի մեջ են մտնում Ղազախստանը և Հայկական ՍՍՀ-ն։ Դրանցում ընդհանրությունը նաև բնակչության ծննդի հավասար մակարդակն է։ Բայց, եթե Ղազախստանում համեմատաբար բարձր է քաղաքային բնակչության (թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց), ապա Հայկական ՍՍՀ-ում՝ գյուղական բնակչության, մասնավորապես կանանց զբաղվածությունը։ Հայաստանի համեմատությամբ Ղազախստանի քաղաքներում բնակչության նման զբաղվածությունը բացատրվում է բնակչության ազգային կազմով։ Այստեղ քաղաքներում բնակվողների մեջ մեծ տոկոս են կազմում ռուսները, ինչպես նաև ուկրաինացիները, ապա նաև բելոռուսները, որոնք ունեն փոքր ընտանիք, կանայք՝ քիչ երեխաներ և ընդգրկված են հանրային տնտեսության մեջ։ Գյուղական վայրերում մեծ տոկոս են կազմում տեղական ազգությունները՝ ղազախները, ուզբեկները, ույգուրները, թաթարները, որոնք ունեն բարձր ծննդաբերություն, հետևապես և մեծ ընտանիք։ Կանայք ավելի շատ ընդգրկված են տնային տնտեսության մեջ։ Հայկական ՍՍՀ-ն Ղազախստանից տարբերվում է նաև քաղաքային բնակչության և մշակող արդյունաբերության ճյուղերում ընդգրկվածության մեծ տոկոսով, աշխատավորների որակավորման համեմատաբար բարձր ցուցանիշներով, և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչության տարածքային, ճյուղային ու պրոֆեսիոնալ ինտենսիվ շարժունակությամբ։ Մինչդեռ Ղազախստանում գյուղական բնակչության շարժունակությունը շատ թույլ արտահայտություն ունի։

Հանրային տնտեսության մեջ ընդգրկվածությունը ցածր է միջինասիական հանրապետություններում և Ադրբեջանում։ Մասնավորապես դա վերաբերում է գյուղական բնակչությանը և կանանց։

Հանրային տնտեսության մեջ զբաղվածության ամենացածր ցուցանիշն ունի Տաջիկստանը։ Այստեղ բնակչության ընդհանուր զբաղվածությունը կազմում է 39,2 %՝ միութենական 51,9-ի դիմաց։ Գյուղական վայրերում այն տղամարդկանց մոտ հասնում է 38,4, կանանց մոտ՝ 45,3 %-ի։ Միջին միութենականը համապատասխանաբար կազմում է 50,8 և 41,2%[6]։ Միջինասիական հանրապետություններում նման զբաղվածությունը բացատրվում է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ կրող գործոններով։ Դրանք առաջին հերթին դեմոգրաֆիկ գործոններն են (բարձր ծնունդը, ընտանիքի համեմատաբար մեծ չափերը, անչափահասների մեծ տոկոսը), գյուղական բնակչության բարձր տոկոսը և գյուղատնտեսությամբ զբաղվելու հակվածությունը, քաղաքային բնակչության շարժունակության մեղմ, իսկ գյուղական բնակչության շարժունակության խիստ ցածր արտահայտվածությունը։ Փոքր դեր չեն խաղում նաև ազգային սովորույթը, կրոնական պատկանելությունը, առաջին խմբերի շարքը դասվող հանրապետությունների հետ կրթական և աշխատավորների որակավորման մակարդակների տարբերությունները և այլն։ Ուստի որոշակի համահարաբերակցական կապ գոյություն ունի մի կողմից ծննդաբերության մակարդակի, բնակչության տարիքային կազմի, քաղաքներում և գյուղական վայրերում բնակվելու նրանց բաշխվածության, ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի (արդյունաբերական է թե գյուղատնտեսական), զբաղմունքի բնույթի, շարժունակության դրսևորման և մյուս կողմից հանրային տնտեսության մեջ զբաղվածության մակարդակի միջև։

---

[5] «Народное хозяйство СССР в 1985 г.», М., 1986, с. 8—9.

[6] «Численность и состав населения СССР...», с. 151, 154.

Այդ մասին պարզ պատկերացում է տալիս № 2 աղյուսակը։

Աղյուսակ № 2

Միութենական հանրապետությունների բնակչության բաշխումն ըստ քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ ընդգրկվածության և ծննդաբերության մակարդակի (1985 թ.)[7]

Հանրապետությունների խմբավորումն ըստ հանրային տնտեսության մեջ ընդգրկվածության մակարդակի	Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը	Արդյունաբերության և շինարարության մեջ ընդգրկվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվի նկատմամբ	Գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ ընդգրկվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվի նկատմամբ	Ծննդաբերությունը բնակչության 1000 շնչի հաշվով
1	2	3	4	5
ՍՍՀՄ	65,6	38	20	19,4
I խումբ				
Լատվիական ՍՍՀ	70,7	41	16	15,2
Էստոնական ՍՍՀ	71,6	42,6	12,9	15.4
ՌՍՖՍՀ	73,1	42	14	16,5
II խումբ				
Բելոռուսական ՍՍՀ	63,1			16,5
Ուկրաինական ՍՍՀ	66,1	39,2	21,3	15,0
Մոլդավական ՍՍՀ	45,7	27,9	36,4	21,9
Լիտվական ՍՍՀ	66,3	40,0	19,7	16,3
III խումբ				
Վրացական ՍՍՀ	54,1	28	28	18,7
IV խումբ				
Հայկական ՍՍՀ	67,9	39	20	24,1
Ղազախական ՍՍՀ	57,5	31,2	33,5	24,9
V խումբ				
Ազրբեջանական ՍՍՀ	54,9	26,0	33.5	26,7
Կիրգիզական ՍՍՀ	39,7	27,5	32,3	32,0
Թուրքմենական ՍՍՀ	47,4	20,7	41,1	36
Ուզբեկական ՍՍՀ	41,9	23,2	38,1	37,2
Տաջիկական ՍՍՀ	33,4	22	43	39,9

Ինչպես երևում է այս աղյուսակից, գրեթե բոլոր հանրապետություններն էլ քաղաքային բնակչության տեսակարար կշռով, արդյունաբերական և գյուղատնտեսական բնույթի զբաղմունքներում ընդգրկվածության և ծննդաբերության մակարդակներով զբաղեցնում են այն խմբերի տեղերը, որ տրվել են հանրային տնտեսության մեջ զբաղվածության մակարդակները խմբավորելիս։ Այդ առումով, որոշ ցուցանիշներով բացառություն են կազմում Հայկական և Մոլդավական հանրապետությունները։ Հայկական ՍՍՀ-ն, օրինակ, քաղաքային բնակչությամբ, ինչպես նաև արդյունաբերության մեջ զբաղվածության բարձր տոկոսով չի համապատասխանում զբաղվածության առումով իր գրաված տեղին։ Քաղաքային բնակչության մակարդակով միութենական հանրապե-

7 Աղյուսակը կազմված է «Народное хозяйство СССР в 1985 г.» ժողովածուի 8—9, 32 և 389 էջերի, ինչպես նաև բոլոր միութենական հանրապետությունների 1985 թ. վիճակագրական ժողովածուների համապատասխան ավյալներով։

տությունների շարքում Հայկական ՍՍՀ-ն զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը։ Բարձր է նաև արդյունաբերության մեջ բնակչության ընդգրկվածությունը, իսկ գյուղատնտեսության մեջ այն հավասարվում է ՍՍՀՄ միջինին։ Այդուհանդերձ ծննդաբերության մակարդակով Հայկական ՍՍՀ-ն համապատասխանում է հանրային տնտեսության մեջ իր զբաղեցրած տեղին։

Ինչ վերաբերում է Մոլդավիային, ապա այն ո՛չ ծննդաբերության մակարդակով և ո՛չ էլ քաղաքային բնակչությամբ չի համապատասխանում հանրային տնտեսության մեջ ընդգրկվածության ցուցանիշով զբաղեցրած տեղին։ Այստեղ բնակչության ընդգրկվածությունը արդյունաբերական բնույթի զբաղմունքներում ցածր է, իսկ գյուղատնտեսության մեջ՝ բարձր։ Հանրային տնտեսության մեջ զբաղվածության մակարդակով երկրորդ խմբում Մոլդավիայի տեղ գրավելը բացատրվում է նրա գյուղական բնակչության, այդ թվում կանանց՝ հանրային տնտեսության մեջ ընդգրկվելու բավականին բարձր տվյալներով։ Օրինակ, Մոլդավիայի քաղաքներում հանրային տնտեսության մեջ ընդգրկված տղամարդ բնակչության տեսակարար կշիռը հավասարվում է միութենական միջինին, իսկ կանանց մոտ՝ գերազանցում է 2,5 կետով։ Գյուղական վայրերում այդ տոկոսը տղամարդկանց մոտ ՍՍՀՄ միջինից բարձր է 2, իսկ կանանց մոտ 5,4 կետով։ Ի դեպ, միութենական բոլոր հանրապետությունների համեմատությամբ՝ գյուղում ապրող կանանց ամենաբարձր զբաղվածության ցուցանիշով աչքի է ընկնում Մոլդավիան։

Այսպիսով, հանրային արտադրության աշխատանքային ռեսուրսների ռեզերվների բացահայտումը թույլ է տալիս եզրակացնել, որ էկոնոմիկայի հետագա ինտենսիվ զարգացումը պետք է բնորոշ լինի բոլոր հանրապետություններին։ 12-րդ հնգամյակում հասարակական արտադրության ինտենսիվացման պայմաններում նոր սերնդի մեքենաների արմատավորման շնորհիվ արտադրության տեխնիկական վերակառուցումը կստեղծի աշխատանքի արտադրողականության բարձրացման նյութական նախադրյալներ՝ հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում։ Ինչ վերաբերում է արագացված զարգացմանը՝ տնտեսական աճի բարձր տեմպերին, աճի նոր որակին, ապա այն ավելի ու ավելի պետք է բնորոշ լինի աշխատանքային ռեսուրսների ակտիվ հաշվեկշռով բնութագրվող հանրապետություններին։ Նման հարցադրումը բացատրվում է նրանով, որ այդ ռեգիոններում հասարակական արտադրությունը կբնութագրվի վերակառուցման, նոր տեխնիկայի, մասնավորապես նոր սերնդի մեքենաների արմատավորման մասշտաբայնությամբ։ Գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված աշխատողների վերաորակավորման, նրանց որակի բարձրացման հետ մեկտեղ, այդ տնտեսական շրջանների համար լուրջ պրոբլեմ է դառնում ընդլայնվող արտադրություններում նոր լրացուցիչ աշխատատեղերը որակյալ աշխատուժով համալրելու խնդիրը։ Նոր ստեղծվող աշխատատեղերը զբաղեցնում են նախ, արտադրության այլ օղակներից ազատվողները, երկրորդ, աշխատանքային տարիք մուտք գործողները, երրորդ, անձնական օժանդակ և տնային տնտեսությունից ազատվողները։ Վերջին երկու խմբերը զբաղեցնում են նաև արտադրության այլ օղակների թափուր աշխատատեղերը։ Էկոնոմիկայի ինտենսիվ զարգացումը նոր խնդիրներ է դնում ինչպես հանրային տնտեսության մեկ օղակից որևէ այլ օղակ տեղափոխվողների վերաորակավորման, այնպես էլ առաջին անգամ հասարակական տնտեսություն մուտք գործողների պրոֆեսիոնալ որակավորման հարցերը լուծելու առումով։ Էկոնոմիկայի վերակառուցման արդի պայմաններում բնորոշ է դառնում աշխատուժի ոչ թե էքստենսիվ, այլ ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրությունը։

Աշխատանքային ռեսուրսների պասիվ հաշվեկշռով բնութագրվող տնտեսական շրջաններում աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը տեղի է ունենում միայն էկոնոմիկայի վերակառուցման պայմաններում, երբ նյութական արտադրության ճյուղերում նոր աշխատատեղեր չեն ստեղծվում։ Մինչդեռ աշխատանքային ռեսուրսներով ապահովված տնտեսական շրջաններում էկոնոմիկայի ընդլայնված վերարտադրությունն ուղեկցվում է ինչպես վերակա-

ոուցման, այնպես էլ նոր արտադրությունների ստեղծման, այսինքն աշխատանքի ասպարեզի ընդլայնման հետ։ Բայց էկոնոմիկայի ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության պայմաններում աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը նույնպես պետք է խարսխվի աշխատուժի ոչ թե էքստենսիվ, այլ ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության վրա։

Աշխատուժի էքստենսիվ տիպի ընդլայնված վերարտադրությունը տեղի է ունենում արտադրության նախկին անփոփոխ տեխնիկական բազայի պայմաններում։ Այսինքն հիմնական ֆոնդերի արժեքի աճի տեմպերը չեն գերազանցում բանվորների թվաքանակի աճի տեմպերը։ Բացի այդ, արտադրության բազմաթիվ օղակներում, ընդլայնվող և նորակառույց ձեռնարկությունները շատ հաճախ հագնցվում են ոչ թե մեքենաների նոր սերնդով, այլ պարզապես նույն սերնդի մեքենաների թիվն ավելացնելով։ Դա նեղացնում է աշխատանքի փոփոխման օրենքի դրսևորման ասպարեզը և տեղի է ունենում աշխատանքի էքստենսիվ տիպի ընդլայնված վերարտադրություն։ Նման պարագաներում ինքը՝ արտադրությունը, չի առաջադրում բանվորական կադրերի պատրաստման այնպիսի պահանջ, որ թելադրվում է նոր պրոֆեսիաների ու մասնագիտությունների երևան գալով։ Նախ, նոր մեքենաների ավելացումն ուղեկցվում է նախկին պրոֆեսիոնալ որակական խումբ ներկայացնող բանվորների թվի ավելացումով։ Երկրորդ, արտադրությունից արտամղված բանվորական կադրերը (բնական մահ, թոշակի անցում, բանակ էգեկնել, ուսումը շարունակել և այլն) փոխարինվում են նոր պրոֆեսիոնալ կազմ ունեցողներով։

Մինչդեռ ինտենսիվ տիպի ընդլայնված վերարտադրության ժամանակ ընդլայնվող և վերակառուցվող արտադրություններում նոր սերնդի մեքենաների արմատավորման հետ մեկտեղ արտադրական անձնակազմը համալրվում, իսկ արտադրությունից դուրս եկած բանվորները փոխարինվում են նոր պրոֆեսիոնալ-որակական կազմ ունեցողներով։ Արտադրության մեջ աշխատող բանվորները բարձրացնում են իրենց որակական մակարդակը, վերաորակավորվում և ձեռք բերում նոր մասնագիտություն։

Մեր էկոնոմիկայի զարգացման նախընթաց փուլերում, մասնավորապես 1970-ական թվականներին և 1980-ականի սկզբներին տեղ գտան լճացման միտումներ, երբ բնորոշ դարձավ էքստենսիվ զարգացումը։ «Էկոնոմիկան,— նշեց Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ XXVII համագումարում,— իներցիայով շարունակում էր զարգանալ զգալի չափով էքստենսիվ հիման վրա, կողմնորոշվում էր դեպի արտադրության մեջ աշխատանքային և նյութական լրացուցիչ ռեսուրսների ներգրավումը։ Որպես հետևանք, լրջորեն իջան աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը և արդյունավետության մի քանի այլ ցուցանիշներ»[8]։ Հենց դրանով էլ բացատրվում է երկրում, ինչպես նաև մեր հանրապետությունում, հասարակական աշխատանքի արտադրողականության տեմպերի նվազումը, որ հատկապես բնորոշ դարձան 1970-ական թվականներին։ Այդ մասին են վկայում № 3 աղյուսակի տվյալները։

Ինտենսիվ ընդլայնված վերարտադրությունը լուրջ խնդիրներ է դնում ժողովրդական տնտեսության հեռանկարային մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման հարցում։ Առաջնահերթ խնդիր է դառնում պրոֆտեխկրթության ցանցի միջոցով կադրերի պատրաստման մասշտաբների ընդլայնումն այն հաշվով, որ այդ ցանցում և անմիջականորեն արտադրության մեջ պատրաստվող բանվորական կադրերի թվի հարաբերակցությունը փոխվի հօգուտ առաջինի։ Միտումը, թեև, այսօր այնպիսին է, որ առաջին անգամ արտադրություն մուտք գործողների ընդհանուր թվում ավելանում է ուսումնական համակարգում կրթություն ստացողների թիվը և տեսակարար կշիռը։

Նախ, անհրաժեշտ է մտահոգվել աշխատանքային տարիք և առաջին անգամ հանրային արտադրություն մուտք գործող պատանիների և աղջիկների

---

8 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», էջ 32։

Աղյուսակ № 3

Աշխատանքի արտադրողականության աճի միջին տարեկան տեմպերը 1961—1985 թթ.[9]

	ՍՍՀՄ			ՀՍՍՀ		
	1961—1970 թթ.	1971—1980 թթ.	1981—1985 թթ.	1961—1970 թթ.	1971—1980 թթ.	1981—1985 թթ.
Հասարակական աշխատանքի արտադրողականությունը	6,4	3,9	3,1	6,7	4,9	3,6
—Արդյունաբերության մեջ	5,2	4,55	3,2	4,3	4,35	3,2
—Գյուղատնտեսության մեջ (հանրային արտադրության)	4,9	2,1	2,7	3,5	1,85	3,7
—Երկաթուղային տրանսպորտում	5,2	2,2	1,55	7,3	3,1	—0,7
—Շինարարության մեջ	5,1	3,65	2,7	—	5,1	4,15

պրոֆեսիոնալ որակավորման հարցերով։ Պակաս կարևոր դեր չի խաղում արտադրության պրոցեսում ընդգրկվածների վերարտակավորման գործի նպատակամղված կազմակերպումը։ Գիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորումը հանգեցնում է ոչ միայն գործող տեխնիկայի, այլև բանվորների մասնագիտական և պրոֆեսիոնալ գիտելիքների բարոյական մաշվածությանը[10]։ Նրանք ոչ միայն չեն տիրապետում ներդրվող նոր տեխնիկային, այլև հնանում են նրանց գիտելիքները, ինֆորմացիան ընկալելու ունակությունները և այլն։ Իսկ դա հանգեցնում է աշխատուժի թե՛ ինտենսիվ, թե՛ էքստենսիվ ռեզերվների օգտագործման հնարավորությունների նվազմանը։ Ուստի առանձին կարևորություն են ստանում հասարակական արտադրության բոլոր օղակներում աշխատանքը հանրորեն միջին նորմալ ինտենսիվության մակարդակին համապատասխան կազմակերպելը, աշխատուժի թե՛ ինտենսիվ, թե էքստենսիվ ռեզերվների օգտագործումը։

Աշխատանքային ռեսուրսներով ապահովված տնտեսական շրջանների (այդ թվում Հայկական ՍՍՀ-ի) համար կարևորվում է հերթափոխության գործակցի բարձրացումը, որին առանձնահատուկ ուշադրություն նվիրեց ինչպես կուսակցության XXVII համագումարը, այնպես էլ ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան (1987 թ.) պլենումը։ Հերթափոխության գործակցի բարձրացումը լայն հնարավորություններ կընձեռի նոր տեխնիկայի օգտագործման գործակցի բարձրացման, ուստի և մեքենաների բարոյական մաշվածությունը կանխելու համար։ Իսկ դա, իր հերթին, կարևոր նախապայման է ֆիզիկապես մաշված արտադրական կարողություններն արագորեն նորով փոխարինելու, ամորտիզացիոն ֆոնդերի հաշվին նոր տեխնիկա արմատավորելու, աշխատանքի արտադրողականության բարձրացման լայն ասպարեզ բացելու համար։

Աշխատանքային ռեսուրսներով ապահովված շրջաններում նոր իմաստ է ստանում ըստ զբաղմունքի ոլորտների աշխատանքային ռեսուրսների բաշխման համամասնությունների հետագա կատարելագործումը։ Դա հատկապես վերաբերում է անձնական օժանդակ և տնային տնտեսություններից հանրային տնտեսություն մուտք գործող ռեսուրսների հնարավոր կոնտինգենտը որոշելուն և դրանց որակավորմանը։ Մինչև օրս հանրային տնտեսությունը համալրող

---

9 Աղյուսակը կազմված է «Народное хозяйство СССР в 1985 г.» ժողովածուի 36—38 էջերի և «Народное хозяйство Армянской ССР в 1985 г.» ժողովածուի 14—15 էջերի տվյալներով։

10 «Экономический строй социализма», М., 1984, с. 284—285.

այդ ռեսուրսների մեծ մասը ընդհանրապես պրոֆեսիոնալ որակավորում չի ունեցել, իսկ մի մասն էլ, եթե նախկինում որակավորում ունեցել է, ապա որոշակի ընդմիջումից հետո հանրային տնտեսություն աշխատանքի վերադառնալու պահին ինչ-որ չափով ապաորակավորվել է։ Դա օբյեկտիվ երևույթ է, որը գերազանցապես պայմանավորված է ընտանիքի վերարտադրությամբ (դրանք հիմնականում այն կանայք են, որոնք ծննդաբերության պատճառով ժամանակավորապես թողել են հանրային տնտեսությունը)։ Ժամանակն է, որ աշխատողների որակավորման բարձրացման համակարգում որոշակի տեղ հատկացվի տնային և անձնական օժանդակ տնտեսություններից առաջին անգամ հանրային տնտեսություն մուտք գործողների պրոֆեսիոնալ որակավորման, ինչպես նաև հետծննդյան շրջանում տևական ընդմիջումից հետո հանրային տնտեսություն վերադարձողների վերաորակավորման համար։ Աշխատանքային ռեսուրսների ակտիվ հաշվեկշռով բնութագրվող ռեգիոնների համար կարևորություն է ստանում տնային և անձնական օժանդակ տնտեսությունների ռեզերվների բացահայտման հիման վրա դրանք հանրային տնտեսության մեջ ընդգրկելու եղանակների ու ձևերի նախապատրաստումը, ընդգրկման բնագավառների ընտրությունը, այդ աշխատուժի օգտագործման առավել ռացիոնալ միջոցների պլանավորումն ու իրականացումը։ Այս ամենը կնպաստի ՀՍՍՀ աշխատանքային ռեսուրսների բաշխման նպատակամղվածության բարձրացմանը, դրանց ռացիոնալ օգտագործմանը։

Ներկայումս լուրջ ուշադրություն է նվիրվում անհատական աշխատանքային գործունեության ոլորտի հետագա զարգացմանը։ Դա իր հերթին կնպաստի աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը։ Դրանով իսկ պայմաններ կստեղծվեն նաև կանանց աշխատանքային գործունեության ակտիվացման, տնային տնտեսության մեջ զբաղմունքը նյութական բարիքների արտադրության հետ զուգակցելու համար։ Գյուղական վայրերում, օրինակ, հենց այսօր էլ կանայք տնային տնտեսության մեջ աշխատանքը զուգակցում են անձնական օժանդակ տնտեսությունը վարելու հետ։ Մինչդեռ քաղաքներում այդպիսի պայմաններ չկան։ Անհատական աշխատանքային գործունեության մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1986 թ. որոշմամբ նման պայմաններ են ստեղծվում նաև քաղաքներում։ Դրանցում այդպիսի գործունեության ծավալումը նպաստավոր պայմաններ կստեղծի տնային տնտեսությունում ընդգրկված կանանց աշխատուժի օգտագործման համար։ Նրանք այն կարող են զուգակցել միմյանց հետ։

Ժողովրդական տնտեսության զարգացմամբ թելադրվող աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը սերտորեն առնչվում է նաև բնակչության միգրացիոն ճիշտ քաղաքականություն մշակելու միջոցով այդ պրոցեսների կառավարման, դրանում պլանայնության դերի բարձրացման, պլանային լծակների ճիշտ օգտագործման հետ։ Դա վերաբերում է ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջհանրապետական միգրացիային։ Այդ իմաստով ակտուալ նշանակություն են ձեռք բերում ռեգիոնի մասշտաբով միգրացիոն հոսանքների կանխատեսումը, նրա ուղղությունների գիտական հիմնավորումն ու իրականացման կազմակերպումը։

Սոցիալիզմի պայմաններում բնակչության միգրացիայի առանձնահատկություններից մեկը նրա պլանայնությունն է։ Սակայն բանն այն է, որ առայսօր Հայկական ՍՍՀ բնակչության միգրացիոն հոսանքների ուղղությունների վրա պլանային լծակների հետ միասին որոշակի ազդեցություն են ունենում նաև տարերային գործոնները։ Միգրացիոն հոսանքների ուղղությունների վրա ազդող պլանային գործոններն արտահայտվում են ուղղակի և անուղղակի։ Ուղղակի, երբ պլանային հիմունքներով կազմակերպվում է բնակչության, նրա աշխատանքային ռեսուրսների տեղափոխությունը մեկ վայրից մի այլ վայր։ Անուղղակի, երբ բուն բնակչության կամ նրա աշխատանքային ռեսուրսների տեղափոխությունը պետականորեն կազմակերպված բնույթ չի կրում, բայց հանրապետության ներսում տնտեսական մի խումբ շրջանների կամ քաղաքների տըն-

տնտեսական և սոցիալական զարգացումը պլանավորելիս նկատի են առնվում շրջանի աշխատանքային ռեսուրսների աճի տեմպերի համեմատ հասարակական արտադրության մասշտաբները գերազանցող տեմպեր (ավելի շատ աշխատատեղերի ստեղծում, բնակարանների կառուցում և ընդհանրապես ինֆրաստրուկտուրայի ստեղծում)։ Ենթադրվում է, որ ընդլայնվող արտադրությունը նոր աշխատանքային ռեսուրսներով պետք է ապահովվի ուրիշ շրջանների աշխատանքային ռեսուրսների հաշվին։ Դրանով իսկ պլանային հիմունքներով բարձր տեմպերով զարգացող շրջանները դառնում են հարևան շրջանների աշխատանքային ռեսուրսների ձգողական կենտրոններ։ Իր հիմքում նման պլանային բնույթ կրող միգրացիան կրում է նաև տարերայնության հայտնի կնիքը, քանի որ այդ պրոցեսը չի ուղեկցվում աշխատանքային ռեսուրսների կազմակերպված հավաքագրման հետ։ Մեր կարծիքով, երկրի զարգացման արդի փուլում հասարակությունը կարող է և պետք է մտահոգվի աշխատանքային ռեսուրսների կազմակերպված հավաքագրում իրականացնելու մասին։ Միայն այդ ճանապարհով իրական նախապայման կստեղծվի աշխատանքային ռեսուրսների նպատակամղված փոխադրումների և ընդլայնվող ռեսուրսների պահանջարկը համապատասխան պրոֆեսիոնալ-որակական կազմ ունեցող աշխատողներով բավարարելու համար։ Չէ՞ որ հանրապետության ամեն մի տնտեսական շրջանում հանրային արտադրության մասշտաբների փոփոխությունը, նրա զարգացման ինտենսիվ և էքստենսիվ գործոնների զուգակցումը առաջադրում է ոչ թե աշխատուժի ընդհանուր, այլ որոշակի սեռի ու տարիքի, պրոֆեսիոնալ-որակական կազմի աշխատանքային ռեսուրսների պահանջ։

Զուտ տարերային միգրացիան անհարիր է պլանային սոցիալ-տնտեսական տնտեսությանը։ Դա առանձնապես վերաբերում է միջհանրապետական միգրացիային։ Օրինակ, ամեն տարի Հայկական ՍՍՀ-ից զգալի թիվ կազմող երիտասարդ տարիքի տղամարդիկ բռնում են զուտ տարերային բնույթ կրող արտագնացության ուղին։ Դրան նույնպես հնարավոր է կազմակերպված ընթացք տալ։ Կազմակերպված միգրացիան կկրի նպատակամղված բնույթ։ Տարերային միգրացիայի պայմաններում հաճախ արտագնացները չեն գնում այնտեղ, որտեղ իրենց կարիքը զգացվում է[11]։ Մինչդեռ մի այլ վայրում նրանց նկատմամբ պահանջարկ կա, և օգտագործման համար ստեղծվել են համապատասխան պայմաններ։ Նման տարերային բնույթ կրող միգրացիան մեծ վնաս է հասցնում ժողովրդական տնտեսությանը, աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը։ Անկազմակերպ միգրացիան առանձնապես վերաբերում է Հայկական ՍՍՀ այն տնտեսական շրջաններին, որոնք տեղադրված են հանրապետության ծայրամասային բարձրադիր գոտիներում։

1979 թ. մարդահամարի նյութերով հանրապետության բնակչության շուրջ 40 %-ը բնակվում էր 1500-ից 2300 մ բարձրություններում, որոնք զբաղեցնում են հանրապետության տարածքի 42,6 %-ը։ Երիտասարդ բնակչության արտահոսքի պատճառով այդ շրջանների գյուղը «ծերանում» է[12]։ Եվ պատահական չէ, որ ծայրամասային լեռնային շրջանները 1970-ական թվականներից սկսած բնութագրվում են «ծերացման» ավելի բարձր մակարդակով՝ ի տարբերություն միջինասիական հանրապետությունների, որտեղ երիտասարդությունն ունի գյուղում ապրելու և գյուղատնտեսությամբ զբաղվելու պայման ու հակվածություն։ Բնակչությունը թողնում է իր բնակավայրը ոչ միայն բարձրության հետ կապված ապրելու դժվարությունների, այլև գերազանցապես տնտեսական գործունեություն իրականացնելու ավելի ցածր հնարավորությունների պատճառով։ Բացասական դեր են խաղում հենց լեռնային ռելիեֆը, նրա խիստ մասնատվածությունը, մակերևույթի կտրվածությունն ու թեքությունը, փոքր հողակտորների առկայությունը, միևնույն շրջանի, գյուղի արտադրական գոր-

---

[11] В. Е. Ходжабекян, Ю. Вазе, Р. Шефер, Демографические проблемы в воспроизводство трудовых ресурсов, Ереван, 1983, с. 55.

[12] Նույն տեղում, էջ 176, «Լենինյան ուղիով», 1984, № 8, էջ 21, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 10, էջ 11—12։

ծունեության ոլորտում ընդգրկված ցածր ու բարձր կետերի տարբերությունը և այլն։ Նման պայմաններում հատուկ դժվարություններ են հարուցվում հողամշակության մեքենայացման, գյուղատնտեսության վարման ինտենսիվ մեթոդների արմատավորման գործում, որի հետևանքով ցածր են աշխատանքի արտադրողականությունը և վարձատրության մակարդակը։ Ծայրամասային լեռնային շրջանները որոշակիորեն տարբերվում են նաև իրենց սոցիալական զարգացման մակարդակով։ Այդ ուղղությամբ ՀԿԿ XXVIII համագումարում նշվեց, որ «անդուլ ուշադրություն կնվիրվի հանրապետության լեռնային և նախալեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման արագացմանը, հանրապետության բոլոր ռեգիոնների զարգացման մակարդակների մերձեցմանը, ժողովրդագրական ակտիվ քաղաքականության վարմանը»[13]։

Ծայրամասային լեռնային շրջանների սոցիալական զարգացման համար ավելի շատ միջոցներ հատկացնելու ներկայումս վարվող քաղաքականությունը շարունակելու հետ մեկտեղ անհրաժեշտ է մտահոգվել կիրառելու տնտեսական այնպիսի լծակներ, որոնք կհանգեցնեն բնակչության նյութական շահագրգռվածության բարձրացմանը։ Մեր կարծիքով շոշափելի արդյունք չի տալիս ծովի մակերևույթից 2000 մ և ավելի բարձրություններում աշխատողների լրացուցիչ վարձատրության վերաբերյալ ներկայումս գործող հավելավճարային դրույքների սանդղակը և նպատակահարմար է. ա) բարձրացնել այդ նպատակով գործող լրացուցիչ հավելավճարումի գործակիցը, բ) կիրառել շերտավորված վարձատրության քաղաքականություն։ Հավելյալ վարձատրություն սահմանել ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա արտադրական գործունեություն իրականացնողների համար՝ յուրաքանչյուր հաջորդ 100 մ-ի հաշվով սահմանելով ավելի բարձր հավելավճար, գ) գյուղատնտեսության մեջ հավելյալ վարձատրությունը կիրառել նկատի առնելով ծովի մակերևույթից այն բարձրության մակարդակը, որտեղ իրականացվում է արտադրական գործունեությունը։ Չէ՞ որ լեռնային շրջաններում գյուղատնտեսության մեջ ընդգրկված բնակչության մեծ մասը իր տնտեսական գործունեությունն իրականացնում է բնակավայրից ավելի բարձր տեղադրված հողամասերում, դ) բրիգադային կապալի արմատավորման հետ միասին պետք է հատուկ ուշադրություն դարձնել ընտանեկան կապալին, քանի որ հենց լեռնային շրջաններին է բնորոշ ոչ մեծ ճակատով աշխատանքի կազմակերպումը, ե) առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծայրամասային լեռնային շրջաններում անձնական օժանդակ տնտեսության վարման հարցերին, պետք է ելնել նաև այն բանից, որ նոր կազմավորվող բոլոր երիտասարդ ընտանիքներն ապահովվեն սահմանված չափի տնամերձ հողամասով, անկախ այն բանից, նոր կազմավորվող ընտանիքը շարունակում է ապրել ծնողների հետ, թե բաժանվում է[14]։ Պետք է լայնորեն կիրառել նման ընտանիքների հետ համապատասխան պայմանագրեր՝ տնամերձից ստացված գյուղատնտեսական մթերքների գնման, իրացման համար, ինչպես նաև տրամադրել համապատասխան վարկ։

Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան (1987 թ.) պլենումում տված զեկուցման մեջ ուղղակի նշեց, որ «լուրջ մոլորություններ եղան անձնական օժանդակ և անհատական աշխատանքային գործունեության վերաբերյալ հայացքների մեջ, ինչը նույնպես տնտեսական և սոցիալական ոչ քիչ վնաս հասցրեց»[15]։ Զ) Նոր կազմավորվող երիտասարդ ընտանիքը ներկայումս օգտվում է անհատական բնակարանային շինարարության համար վարկից։ Նպատակահարմար է տրամադրվող վարկի և զեղչի տոկոսների չափերը և մարման ժամկետները սահմանել երեխաների թվին համապատասխան։ Երեք և ավելի երեխա ունեցող երիտասարդ ընտանիքներին տրամադրել համեմատաբար շատ վարկ՝ ավելի երկար ժամկետում և ցածր տոկոսով մարելու պայմանով։

---

13 «ՀԿԿ XXVIII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 45։

14 «Լենինյան ուղիով», 1984, № 8, էջ 24։

15 «Սովետական Հայաստան», 28. I. 1987։

ՍՄԿԿ XXVII և ՀԿԿ XXVIII համագումարները երկրի սոցիալական զարգացման խնդիրները գնելիս կարևոր տեղ հատկացրին բնակչության, մասնավորապես գյուղական բնակչության սպասարկման ոլորտի հետագա ընդլայնման, այդ բնագավառում զբաղվածության ավելացման հարցերին։ Եթե նյութական արտադրության ճյուղերում արագացված զարգացումը կուղեկցվի նրանում զբաղվածության բացարձակ կրճատման հետ, ապա ոչ արտադրական ոլորտի ճյուղերում գիտատեխնիկական առաջընթացի հետ մեկտեղ արագացված զարգացման կարևոր նախապայման է զբաղվածության ավելացումը։ Դա աշխատավորության սպասարկման մակարդակը բարձրացնելու և սոցիալական բազմաբարդ խնդիրներ լուծելու հետ միասին կնպաստի գյուղական բնակչության՝ գյուղում բնակվելու կայունացմանը և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը։

СОВРЕМЕННЫЕ ЗАДАЧИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ТРУДОВЫХ РЕСУРСОВ

АРМИНЕ ХОДЖАБЕКЯН

Резюме

XXVII съезд КПСС, январский (1987 г.) и июньский (1987 г.) Пленумы ЦК КПСС особое внимание уделили вопросам повышения эффективности использования трудовых ресурсов в условиях ускорения социально-экономического развития. Наряду со многими общими аспектами данной проблемы в экономических районах страны, характеризующихся трудообеспеченностью или же дефицитом трудовых ресурсов имеется и ряд разнообразных конкретных задач. Причем отдельные экономические районы отличаются не только условиями пополнения населения трудоспособного возраста, но и другими резервами пополнения общественного хозяйства трудовыми ресурсами. В этом смысле в каждом экономическом районе довольно важное значение приобретает сопоставление конкретных материалов, выявление характера связи между уровнем занятости в общественном хозяйстве с одной стороны, и характером занятости, удельным весом городского населения, а также уровнями рождаемости—с другой.

Наряду с выявлением и использованием интенсивных резервов использования трудовых ресурсов в общественном хозяйстве Арм. ССР особый интерес представляют также задачи сокращения миграции населения из окраинных горных районов и повышения уровня его занятости на местах. С этой целью следует разработать и внедрить в этих районах политику дифференцированной оплаты, причем дополнительную оплату предоставлять не только за высокогорность по месту жительства, но и по месту производственной деятельности, поскольку в горных районах большинство населения работает на участках, расположенных выше их местожительства.